

1. Հաստատության գործունեությունը

1.1 Ինչ կրթական կարիքներ է բավարարելու

Արագ փոփոխվող աշխարհը մարդկության առաջ դնում է իր պահանջները. վերափոխվել է ողջ իրողությունը, այդ թվում՝ կրթության բովանդակությունը, նպատակները, վերջնարդյունքները : Կրթության առաքելությունն այլևս սովորողներին գիտելիքներով, կարողություններով և հմտություններով զինելը չէ: Այսօր կրթության առաքելությունը համընդհանուր ներառական, սովորողակենտրոն և մասնակցային կրթական միջավայրի ստեղծումն է, որը ենթադրում է բոլորի համար որակյալ կրթական ծառայությունների մատչելիություն և հասանելիություն: Կրթության ոլորտում շեշտը դրվում է կարողունակությունների վրա, ինչը թույլ կտա ձևավորել ակտիվ, նախաձեռնող, բազմակարծիք, հանդուրժող, 21-րդ դարի կարողունակություններով օժտված քաղաքացի:

Սույն զարգացման ծրագրի կրթության տեսլականը որակյալ կրթության ապահովումն է յուրաքանչյուր երեխայի համար՝ անկախ սոցիալական պայմաններից, հոգեբանական և ինտելեկտուալ առանձնահատկություններից, հետաքրքրություններից, հակումներից և կարողություններից:

Ուստի անհրաժեշտություն է առաջացել վերափոխելու նաև դպրոցի կառավարման սկզբունքները: Սույն զարգացման ծրագրի կազմման առանցքային սկզբունքը կառավարման մասնակցային համակարգի ներդրումն է, դպրոցի կառավարման գործում շահագրգիռ բոլոր մարմինների ներգրավումը:

Կրթության համակարգի բաղադրամասերն են՝ նպատակային-պլանային, ծրագրային-բովանդակային, կազմակերպչական-կառավարչական և վերահսկողական-արդյունքայինը:

Կառավարչական խնդիրները լուծման փուլերն են՝ իրադրության ուսումնասիրումը, գործունեության պլանավորումը, ներգործությունների կոորդինացումը, վերահսկումը և արդյունքների գնահատումը, արդյունքների վերլուծությունը և մշակումը:

Դպրոցի կառավարման գործառույթներն են՝ կանխատեսման, հայտորոշման, հաղորդակցական, պլանավորման, կազմակերպման և վերահսկման:

Սույն ծրագիրը կազմվել է հաշվի առնելով վերոնշյալ բաղադրամասերը, փուլերն ու գործառույթները:

«ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Դ.Վարուժանի անվան №16 հիմնական դպրոցը» ՊՈԱԿ-ը 08.09.2003 թվականին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետեզիստրի տարածքային բաժնում:

Պետ. ռեգիստր №222.210.00191, տրված՝ 08.09.2003

Տարրական ընդհանուր I աստիճանի լիցենզիա №0181՝ 405 աշակերտ:

Հիմնական ընդհանուր I աստիճանի լիցենզիա №0175՝ 500 աշակերտ:

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 07.09.2017թ.:

Դպրոցի շենքը տիպային է:

Դպրոցում առկա են 18 կահավորված դասասենյակ, ՄՄԱԸ դասասենյակ, համակարգչային գրադարան-ընթերցասրահ, անգլերենի դասասենյակ, ռուսերենի դասասենյակ, շախմատի դասասենյակ, ՆԶՊ դասասենյակ /հրաձգարան/, մեթոդական կաբինետներ, տեխնոլոգիայի դասասենյակ, արհեստանոց, ԱՐՄԱԹ ինժեներական լաբորատորիա, ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիաներ, ԿԱՊԿ աշակերտների հարմարեցված սենյակներ, 2 մարզադահլիճ, մարզահրապարակ, հանդիսությունների դահլիճ, ճաշարան, բուժկետ, առանձնասենյակներ:

- ✓ Դպրոցի ընդհանուր աշխատակիցների թիվը 54 է, վարչական և մանկավարժական աշխատողների թիվը 42 է, որից 29՝ ուսուցիչ, 3 ուսուցիչ աշխատում է ներքին համատեղությամբ, իսկ 2 ուսուցիչ համատեղությամբ աշխատում է այլ ուսումնական հաստատություններում: Բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն մանկավարժական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ, անցել են պարտադիր ատեստավորում: 3 ուսուցիչ կամավոր ատեստավորված է և ստանում է հավելավճար, 6 ուսուցիչ ունի առաջին աստիճանի տարակարգ:
- ✓ Ուսումնական պարապմունքների ավարտին աշակերտների ընդհանուր թիվը կազմել է 488:
- ✓ Ըստ 2022-2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի մեկ ուսուցչին բաժին ընկնող միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 18.2:
- ✓ Դպրոցում գործում է 4 մեթոդավորում՝ տարրական դասարանների, հումանիտար, մաթեմատիկական և բնագիտական:
- ✓ Դպրոցում ուսուցանվում է 3 օտար լեզու՝ ռուսերեն, անգլերեն և գերմաներեն:
- ✓ Դպրոցը հանդիսանում է «ՀՀ գյուղական համայնքներում բացակա ուսուցիչների խնդրի լուծումն
- ✓ Էլեկտրոնային դասավանդման միջոցով ծրագրի շրջանակներում մենթոր դպրոց:
- ✓ Դպրոցը երեք անգամ ճանաչվել է եվրոպական դպրոցների համագործակցության eTwinning դպրոց:

1.2 Համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին

Սույն ծրագիրը կազմվել է Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրի հիման վրա և լիովին համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին: Հատկապես ուշադրության է արժանացել համայնքի, շահառու խմբերի կարիքներն ու հնարավորությունները:

1.3 Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին:

Հաստատության գործունեությունը լիովին համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին:

2022-2023 ուսումնական տարում դպրոցում կազմավորվել է 18 դասարան՝ 9 տարրական դպրոց, 9 միջին դպրոց.

- 1-ին դասարան 53 աշակերտ
- 2-րդ դասարան 50 աշակերտ
- 3-րդ դասարան 61 աշակերտ
- 4-րդ դասարան 58 աշակերտ
- 5-րդ դասարան 62 աշակերտ
- 6-րդ դասարան 61 աշակերտ
- 7-րդ դասարան 47 աշակերտ
- 8-րդ դասարան 53 աշակերտ
- 9-րդ դասարան 44 աշակերտ

Ցուցանիշը	2018-2019 ուստարի	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
Ուսուցիչների ընդհանուր թիվը	33	31	32	31	29
Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը	14.9	17.3	15.4	17	18.2

Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ

Ուսուցիչների տարիքային կազմ	Քանակ
Մինչև 30 տարեկան	2
31-ից 40 տարեկան	14
41-ից 50 տարեկան	5
51-ից 60 տարեկան	6
61 տարեկան և ավելի	2

Դպրոցի շենքային և նյութատեխնիկական բազայի վերաբերյալ տվյալներ

Դասարան (քանակը, յուրաքանչյուրի մակերեսը)	18 դասարան 34.1քմ, 41.1քմ, 41.1քմ, 56.1քմ, 56.5քմ, 57.1քմ, 57.6քմ, 57.9քմ, 58քմ, 58.1քմ, 58.6քմ, 59.2քմ, 59.3քմ, 75քմ, 75.5քմ, 79.3քմ, 97.3քմ, 98.4քմ
Լաբորատորիա (քանակը, յուրաքանչյուրի մակերեսը)	3 լաբորատորիա քիմիայի և կենսաբանության - 75քմ ֆիզիկայի – 58.6քմ ԱՐՄԱԹ հնժեներական լաբ. - 38.2քմ
Առարկայական կաբինետ (քանակը, յուրաքանչյուրի մակերեսը)	8 հայոց լեզու – 15.1քմ ռուսաց լ. -38.2քմ անգլերեն – 34.4քմ պատմություն – 35.7քմ մաթեմատիկա – 19.1քմ ՆԶՊ /հրաձգարան/- 86քմ տեխնոլոգիա – 17.8քմ, 19.6քմ

Արհեստանոց (քանակը, յուրաքանչյուրի մակերեսը)	2 Յուրաքանչյուրը՝ 12քմ
Գրադարան-ընթերցասրահ (քանակը, յուրաքանչյուրի մակերեսը)	2 գրադարան 1 – 38.7քմ գրադարան 2 - 38.7քմ
Համակարգչային սենյակ (քանակը, յուրաքանչյուրի մակերեսը)	2 SMART դասասենյակ- 78.4քմ համակարգչային դասասենյակ – 79.1քմ
Մարզադահլիճ (քանակը, յուրաքանչյուրի մակերեսը)	2 յուրաքանչյուրը՝ 343.7քմ
Մեթոդական կաբինետ-ուսուցչանոց (քանակը, յուրաքանչյուրի մակերեսը)	1 37.4քմ
Բազմամասնագիտական թիմ (քանակը, յուրաքանչյուրի մակերեսը)	3 հոգեբանի սենյակ – 13.7քմ սոց.մանկավարժի սենյակ – 15.5քմ
Բուժկետ (քանակը, յուրաքանչյուրի մակերեսը)	1 13.7քմ
Ճաշարան-բուֆետ (քանակը, յուրաքանչյուրի մակերեսը)	1 253.5քմ
Հանդիսությունների դահլիճ (քանակը, յուրաքանչյուրի մակերեսը)	1 189.8քմ
Մարզահրապարակ (քանակը, յուրաքանչյուրի մակերեսը)	2 1600քմ, 5500քմ
Բակ	28408.8քմ

Հ/հ	ՄՄԱԸՔ դասասենյակ	քանակը
1.	Համակարգիչ	10 հատ
2.	Դյուրակիր համակարգիչ	2 հատ
3.	Էլեկտրոնային գրատախտակ	1 հատ
4.	Պրոյեկտոր	2 հատ
	Համակարգչային դասասենյակ	քանակը
1.	Համակարգիչ	10 հատ
2.	Դյուրակիր համակարգիչ	2 հատ
3.	Պրոյեկտոր	1 հատ
	ԱՐՄԱԹ ինժեներական լաբորատորիա	քանակը
1.	Մինի համակարգչի հավաքածու	5 հատ
2.	Համակարգչի հավաքածու (եռաչափ տպիչի համար)	1 հատ
3.	Համակարգչի հավաքածու (շաղափային և լազերային հաստոցի)	1 հատ
4.	Եռաչափ տպիչ Բգեգ 2.0	1 հատ
5.	Փոշեկուլ GORENJE VC1411	1 հատ
6.	Ռոբոտ-կոնստրուկտորի հիմնական հավաքածու	1 հատ
7.	Նորացման ու գործիքների լրացուցիչ հավաքածու	1 հատ

8.	Ռոբոտի մեխանիկական և էլեկտրոնային հանգույցների լրացուցիչ հավաքածու	1 հատ
9.	Ավտոմատացման ու էլեկտրոնիկայի ընդլայնման հավաքածու	1 հատ
Անգլերենի և ռուսերենի դասասենյակներ		
1.	Գեղարվեստական գրականություն	
2.	Մեթոդական գրքեր, ամսագրեր	
3.	Պաստառներ	
Պատմության կաբինետ		
1.	Քարտեզներ	
2.	Պաստառներ	
ՆԶՊ կաբինետ և հրաձգարան		
1.	Ուսումնական զենք	
2.	Հակազգազեր	
3.	Քիմիետախուզության զենք	
4.	Պաստառներ	
Մարզագույք /հին/		
1.	Այծիկ	1 հատ
2.	Կամրջակ	1 հատ

3.	Շվեդական պատ	2 հատ
4.	Թենիսի սեղան	1 հատ
Մարզագույք /տր/		
1.	Այծիկ	1 հատ
2.	Կամրջակ	1 հատ
3.	Զուգափայտ	1 հատ
4.	Շվեդական պատ	4 հատ
5.	Մարմնամարզական ներքնակ	6 հատ
6.	Մարզաձող	1 հատ
7.	Ցանց վոլեյբոլի	1 հատ
8.	Զգման պարան	1 հատ
9.	Մարզումների օղակ մեծ	3 հատ
10.	Մարզումների օղակ փոքր	4 հատ
11.	Ֆուտբոլի գնդակ	2 հատ
12.	Բասկետբոլի գնդակ	1 հատ
13.	Վոլեյբոլի գնդակ	2 հատ
14.	Հենդբոլի գնդակ	1 հատ
15.	Ֆիթնես գնդակ	2 հատ
16.	Պլաստմասսե բուրգ մեծ	10 հատ

17.	Արգելների հավաքածու	4 հատ
18.	Իսաղի օղակ մեծ	10 հատ
19.	Սպորտային պարկեր և թունելներ 2-ական	2 հատ
20.	Պոմպ ձեռքի	1 հատ
Սոց.մանկավարժի և հոգեբանի սենյակ		
1.	Պաստառներ, քարտեր, խորանարդներ	
2.	Լեզո	
3.	Իճանկար	
4.	Դոմինո	
5.	Իսաղալիքներ	
Արհեստանոց		
1.	Փայտի խառատային հաստոց	
2.	Դազգահ	
3.	Ռանդաներ	

2. Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ տեղերը

2.1 Հաստատության շենքային պայմանները

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Ուսումնական դասասենյակները ապահովված են բնական լուսավորությամբ, սովորողների աշխատանքային տեղերն ապահովված են ձախակողմյան բնական լուսավորությամբ: Պահպանվում է մեկ սովորողի համար սահմանված՝ 2 մ² մակերեսի պահանջը:</p> <p>Միջանցքները լայն և ընդարձակ են:</p> <p>Դպրոցն ունի վերանորոգված, նորմատիվներին համապատասխանող մեկ մարզադահլիճ, առկա են մարզական գույքի պահման սենյակ, տղաների և աղջիկների հանդերձարաններ, սանհանգույցներ, տաք ջրով ցնցուղներ:</p> <p>Առկա են 14 վերանորոգված սանհանգույցներ, որոնցից մեկը՝ ճաշարանում, երկուսը՝ մարզադահլիճում, իսկ մեկը՝ հարմարեցված է ԿԱՊԿ ունեցող երեխաների կարիքներին: Առկա է աշխատակիցների համար առանձնացված սանհանգույց:</p> <p>Դպրոցն ունի ժամանակակից համակարգչային գրադարան-ընթերցասրահ և գրապահոց:</p> <p>Դպրոցն ունի վերանորոգված և կահավորված հանդիսությունների</p>	<p>Դպրոցը ջեռուցվում է մասնակի, չեն ջեռուցվում միջանցքները, սանհանգույցները և որոշ սենյակներ:</p> <p>Դպրոցի երկրորդ մարզադահլիճն ունի վերանորոգման և ջեռուցման կարիք:</p> <p>Առկա են 3 չվերանորոգված սանհանգույցներ, և 4 չգործող որոնցից երկուսը՝ չվերանորոգված մարզադահլիճում:</p> <p>Դպրոցի պատուհանների մոտ 20%-ը /դասասենյակներ չեն/ հին են և կարիք ունեն փոխարինման:</p> <p>ՆՁՊ-ի, շախմատի, տեխնոլոգիայի կաբինետները, ֆիզիկայի, կենսաբանության և քիմիայի լաբորատորիաները վերանորոգման և ջեռուցման կարիք ունեն: Լաբորատորիաներ չեն համապատասխանում չափանիշներին, որտեղ հնարավոր կլինեյր յուրաքանչյուր սովորողի համար ապահովել անհատական նստատեղեր:</p> <p>Դպրոցի տանիքի մակերեսի մոտ 40%-ը ունի նորացման կարիք, վատ է աշխատում նաև նշված մակերեսի ջրահեռացման համակարգը:</p> <p>Միջանցքների, դասասենյակների և սենյակների մոտ 40%-ն ունի</p>

դահլիճ՝ նախատեսված 180 հանդիսատեսի համար:

Դպրոցն ունի ռուսաց և անգլերեն լեզուների համար նախատեսված կահավորված դասասենյակներ: Անգլերենի դասասենյակը համալրված է ժամանակակից փրակնությամբ:

Դպրոցն ունի ժամանակակից վերանորոգված և կահավորված ԱՐՄԱԹ ինժեներական լաբորատորիա և ՄՄԱՐԹ դասասենյակ:

Առկա են վերանորոգված սանիտարական պահանջներին համապատասխան կահավորված բուժական նշանակության սենքեր/բուժկետ և մեկուսարան/:

Դպրոցն ունի լոկալ ջեռուցման համակար՝ որն իրականացվում է 7 ջեռուցման կաթսաներով: Ջեռուցվու մեն միայն դասասենյակները, ուսումնական կաբինետները, առանձնասենյակները, ուսուցչանոցը, գրադարանը, ճաշարանը, մեկ մարզադահլիճը և հանդիսությունների դահլիճը:

Դպրոցի պատուհանների մոտ 80% ջերմամեկուսիչ մետաղապլաստից են:

Դպրոցն ունի շուրջօրյա ջրամատակարարում:

Դպրոցի տարածքը կանաչապատ է, առկա է ծաղկանոց, մինի-այգի, պտղատու ծառեր:

Կահավորված և վերանորոգված սննդի կազմակերպման վայր:

Հետնամուտքի մոտ առկա է թեքահարթակ:

Դպրոցն ունի թաքստոց, բազմաթիվ պահուստային ելքեր:

կոսմետիկ վերանորոգման կարիք:

Դպրոցի բակը չունի ցանկապատ, ինչը թույլ չի տալիս ապահովել սովորողների համար անվտանգ և ապահով միջավայր:

Դպրոցի սպասարկման այլընտրանքային աստիճանները ենթակա են վերանորոգման /գտնվում են դպրոցի տարածքից դուրս/:

Ենթակա է բարեկարգման դպրոցի մարզահրապարակը:

Բուֆետի բացակայություն:

Դպրոցի ներսում և գլխավոր մուտքի մոտ չկա թեքահարթակ:

Հաշվի առնելով սովորողների հակումներն ու նախասիրությունները, նկարչական և ձեռքի աշխատանքների մրցույթներում ցուցաբերած բարձր ցուցանիշները այնուամենայնիվ դպրոցում չկա Ձեռքի աշխատանքի, մոդելավորման, տեխնիկական խաղալիքների, կիրառական արվեստի և նկարչական սենյակ:

Չկան համապիտանի դասասենյակներ նախատեսված երկարօրյա խմբերի և դասարան-կաբինետ՝ անհատական պարապմունքների համար:

Հնարավորություններ	Վտանգներ
<p>Թույլ կողմերում ներկայացված բոլոր խնդիրներն իրագործելի են դպրոցի բյուջեն ճիշտ պլանավորելու դեպքում:</p> <p>Արտաբյուջետային միջոցների գոյացում:</p> <p>Ձեռնարկատիրական գործունեության ծավալում:</p> <p>Սահմանել առաջնահերթությունները ճիշտ ուղղությամբ</p>	<p>Երկրի տնտեսական վիճակի վատթարացում, համաճարակներ, պատերազմական իրավիճակ, արտագաղթ:</p> <p>Աշակերտների և դասարանների թվի նախատեսվածից քիչ աճ:</p> <p>Բյուջետային հատկացումների, հիմնադրի և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների ոչ արդյունավետ տնօրինում:</p>

2.2. Հաստատության նյութատեխնիկական բազան

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Դպրոցի ՄՄԱԸՊ դասասենյակը ապահովված է նոր սերնդի համակարգիչներով, պրոյեկտորով և էլեկտրոնային գրատախտակով:</p> <p>Գրադարան-ընթերցասրահը ապահովված է համակարգիչներով, հեռակառավարվող էկրանով, պրոյեկտորով՝ նախատեսված տեսադասեր իրականացնելու համար:</p> <p>Դպրոցում կան 2 շարժական պրոյեկտոր, դյուրակիր համակարգիչներ և պլանշետներ, որոնք նախատեսված են հեռավար դասերի և դասասենյակներում ՏՀՏ օգտագործմամբ դասերի իրականացման համար:</p> <p>Գործում է ԱԸՄԱԹ ինժեներական լաբորատորիա, հազեցած</p>	<p>Դպրոցի գույքի մոտ 30%-ը բավարար վիճակում է և ենթակա է թարմացման:</p> <p>Ժամանակակից կրթական կարիքների ապահովման նպատակով ուսումնամեթոդական նյութերի քանակը սակավ է /պաստառներ, քարտեզներ, մուլյաժներ և այլն/:</p> <p>Դպրոցն ունի ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության ժամանակակից լաբորատոր սարքավորումների, դիդակտիկ պարագաների, քիմիական նյութերի կարիք:</p> <p>Դպրոցի միջանցքներում սակավ են ստենդները և ուսումնամեթոդական ժամանակակից նյութերը:</p>

<p>անհրաժեշտ սարքավորումներով և գույքով:</p> <p>Դպրոցում առկա է 4 բազմաֆունկցիոնալ տպող և տեսածրող սարքեր, UPS սարքեր:</p> <p>Վարչական գործառույթների և մանկավարժահոգեբանական աջակցության թիմի աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար առկա են համապատասխան համակարգիչներ և տեխնիկական միջոցներ:</p> <p>Դպրոցում առկա են 3 հեռուստացույցներ, որոնցից մեկը ապահովում է անվտանգության համակարգը, իսկ երկուսը՝ նախատեսված է սովորողների և աշխատակիցների ռեկրեացիան կազմակերպելու և դպրոցի առօրյային իրազեկ դարձնելու համար:</p> <p>Դպրոցական ուսումնադաստիարակչական միջոցառումների իրականացման համար առկա է երկու փոքր երժշտական կենտրոն և մեկ պրոֆեսիոնալ նվագարկիչ՝ բարձրախոսներով և խասափողներով:</p> <p>Աղջիկների տեխնոլոգիայի կաբինետում առկա է նորագույն կարի մեքենա:</p> <p>Դպրոցը ապահովված է անվտանգության տեսահամակարգով:</p> <p>Կոշտ գույքի գրեթե 70% գտնվում է լավ վիճակում: Գույքի քանակը բավարար է և համաճարակային իրավիճակում հնարավոր է յուրաքանչյուր աշակերտի ապահովել մեկ նստարանով:</p> <p>Դասարաններում և ուսումնական սենյակներում առկա են պահարաններ:</p> <p>ԿԱՊԿ աշակերտների համար նախատեսված սենյակները հազեցած</p>	<p>Համակարգիչները թեև բավարար են ինֆորմատիկայի դասերի և տեսադասերի կազմակերպման համար, սակայն ժամանակակից դասավանդման գործընթացում՝ S2S օգտագործմամբ դասերի իրականացումը պահանջ է, որն իրագործելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր դասարանում ապահովել մեկական համակարգիչ և պրոյեկտոր, դպրոցի ողջ տարածքը ապահովել հզոր ինտերնետ կապով՝ հաշվի առնելով սովորողների համացանցից օգտվելու ապահովությունն ու անվտանգությունը:</p> <p>Դպրոցի մեթոդական կաբինետներ և ուսուցչանոցը ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած և արդիականացված չեն:</p> <p>Տեխնոլոգիայի կաբինետները և արհեստանոցը ունեն վերազինման անհրաժեշտություն:</p>
---	--

<p>են համապատասխան գույքով. բազմոց, բազկաթոռներ, խաղասեղաններ, դիդակտիկ պարագաներ:</p> <p>Դպրոցի ճաշարանի և ամբողջ գույքը նոր է. առկա են ջրատաքացուցիչներ, սառնարաններ, վառարան, գազօջախ, կշեռքներ, աշակերտների համար լվացարաններ և ձեռքերի էլեկտրական չորացման սարքեր:</p> <p>Դպրոցում առկա է չրանոց՝ նախատեսված դպրոցի մինի այգիու և պտղատու ծառերի բերքից չիր պատրաստելու և ձմռանը սովորողների սննդի կազմակերպման ժամանակ լրացուցիչ սննդակարգում ընդգրկելու համար:</p> <p>Դասասենյակներն ապահովված են սովորողների թվին համապատասխան կախիչներով, նոր գրատախտակներով՝ կավճային և մագնիսական:</p> <p>Դպրոցի տարածքի գրեթե 50% ապահովված է ինտերնետ կապով /լարային կամ wi-fi/:</p> <p>Մարզադահլիճը հագեցած է անհրաժեշտ սպորտային գույքով:</p> <p>Հանդիսությունների դահլիճը ունի նոր վարագույրներ և աթոռներ:</p> <p>Առկա են համապատասխան քանակությամբ կրակմարիչներ:</p>	
Հնարավորություններ	Վտանգներ
<p>Առաջնահերթ է համակարգողի կողմից բյուջետային հատկացումների, հիմնադրի և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ</p>	<p>Երկրի տնտեսական վիճակի վատթարացում, համաճարակներ, պատերազմական իրավիճակ, արտագաղթ:</p> <p>Աշակերտների և դասարանների թվի նախատեսվածից քիչ աճ:</p>

<p>օգտագործումը, ուսումնանյութական բազայի հաշվառումը, պահպանումը, համալրումը.</p> <p>Նպատակահարմար է զարգացնել դպրոցի մանկավարժների կարողությունները դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու ուղղությամբ՝ դպրոցը նորագույն նյութատեխնիկական բազայով զինելու համար:</p> <p>համակարգված գիտելիքների տրամադրում համացանցի ապահովել արդյունավետ օգտագործման մասին:</p>	<p>Բյուջետային հատկացումների, հիմնադրի և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների ոչ արդյունավետ տնօրինում:</p> <p>Սովորողների մոտ վիրտուալ ցանցերում առաջացող հնարավոր վտանգներ, դասապրոցեսին համացանցի ոչ արդյունավետ օգտագործում:</p>
---	---

2.3 Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները

Դպրոցի կառավարման կարևորագույն սկզբունք է համարվում կառավարման գործընթացի մասնակցային բնույթը:

Դպրոցի կառավարման մարմիններն են՝

- 1) հիմնադիրը.
- 2) նախարարությունը, տարածքային կառավարման մարմինը, Երևանի քաղաքապետը (այսուհետ՝ լիազորված մարմին).
- 3) կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը.
- 4) գործադիր մարմինը՝ դպրոցի տնօրենը:

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Կառավարման խորհուրդը նիստերը գումարում է դպրոցի կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում և դեպքերում: Գործադիր մարմինը՝ դպրոցի տնօրենը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում խորհրդին քննարկմանն է ներկայացնում դպրոցի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները, ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները, ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները, ինչպես նաև ներքին և արտաքին գնահատման արդյունքները:</p> <p>Դպրոցի մանկավարժական խորհուրդը կազմված է 42 մանկավարժներից: Մանկավարժական խորհուրդը կրթության որակի ապահովման առաջնային օղակ է, որը մշտապես ինքնակրթվում և կատարելագործվում է՝ յուրաքանչյուր երեխայի համար որակյալ կրթություն ապահովելու նպատակով: Մանկավարժական խորհուրդը հետևողական քննարկում և վերլուծում է սովորողների ուսումնառության որակը, վերհանում առկա խնդիրները, առաջարկում դրանց լուծման ուղիներ: Մշտապես ուշադրության կենտրոնում պահելով ԿԱՊԿ սովորողների հետ տարվող</p>	<p>Դպրոցը չունի շրջանավարտների խորհուրդ:</p> <p>Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ:</p> <p>Դպրոցի խորհրդի աշխատանքներում ԿԳՄՍ նախարարության և ՏԻՄ/մարզպետարանի ներկայացուցիչները ավելի պասիվ դերակատարում ունեն: Պատճառն այն է, որ նրանք ուղղակի նշանակված են, հստակորեն չգիտեն իրենց դերը, լիազորություններն ու պարտականությունները:</p> <p>Նրանց տեղեկացվածությունը, կրթության ոլորտի խնդիրների իմացությունը, ինչպես նաև իրավական գիտելիքները բավարար մակարդակի վրա չեն: Բացակայում են խորհուրդների անդամներին առաջադրման համար ներկայացվող չափանիշներ, նրանք հիմնականում կրթության ոլորտի ներկայացուցիչներ չեն, նրանց աշխատանքի արդյունավետության գնահատման մեխանիզմներ առկա չեն:</p> <p>Կուլեգիալ կառավարման խորհուրդը չունի էական ազդեցություն կրթության որակի վրա:</p> <p>Դպրոցի խորհրդի անդամների հանդիպումները կրում են պարտադրված բնույթ:</p>

աշխատանքները, ըստ անհրաժեշտության առաջարկում վերանայել տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները:

Դպրոցում գործում է **4 առարկայական մեթոդական միավորումներն**՝ տարրական դասարանների, հումանիտար, մաթեմատիկական և բնագիտական: Մեթոդական միավորումները՝ քննարկում են ՀՊԶ-ին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, ԿԱՊԿ սովորողի ԱՌԻՊ-ը, ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում, կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ:

Աշակերտական խորհուրդը ձևավորվում է սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ դպրոցի կանոնադրության դրույթների պահպանումը վերահսկելու նպատակով և ղեկավարվում է նախարարության կողմից հաստատված աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությամբ: Աշակերտական խորհուրդի հանձնախմբերը ձևավորվում են աշակերտների տարիքային առանձնահատկություններին, հետաքրքրություններին և կարողություններին համապատասխան: Աշակերտական խորհրդի և դպրոցի տնօրենության միջև ստեղծված է մասնակցային մշակույթ, որը ապահովում է աշակերտական խորհուրդի կողմից իրենց

Աշակերտները լիովին չեն գիտակցում աշակերտական խորհրդի կարևորությունը, նրանք բավարար տեղեկացված չեն աշակերտական խորհրդի դերի, իրավունքների, լիազորությունների մասին, Ցածր է խորհրդակցական մարմինների նախաձեռնողականությունը և ինքնավարությունը:

<p>անմիջականորեն վերաբերվող հարցերի շուրջ բաց և համագործակցային քննարկումները: Դպրոցի տնօրենի անմիջական մասնակցությամբ սովորողների նախաձեռնությունները քննարկվում և կյանքի են կոչվում:</p> <p>Ծնողական խորհուրդում ընդգրկված է 18 ծնող, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է իրենց դասարանական ծնողական խորհրդի նախագահ: Ծնողական խորհուրդի և տնօրենի միջև հարաբերությունները հիմնված են փոխադարձ վստահության և համագործակցության վրա: Ծնողների ներգրավվածությունը ուսումնադաստիարակչական աշխատանքներին կազմակերպվում է մասնակցային մշակույթի սկզբունքներով: Ծնողական խորհուրդը մշտապես աջակցում է արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպմանը:</p>	
<p>Հնարավորություններ</p>	<p>Վտանգներ</p>
<p>ԿԳՄՍ նախարարության առկա մեխանիզմները և թափանցիկ աշխատելառճը հնարավորություն է տալիս դպրոցի կառավարման և ղեկավարման գործընթացների կարգավորմանն առնչվող օրենսդրական և իրավանորմատիվային ակտերի նախագծման փուլում ապահովել դպրոցի տնօրենի, ուսուցիչների և կառավարման այլ մարմինների ներկայացուցիչների լայն մասնակցությունը, ինչը թույլ է տալիս այդ գործընթացը դարձնել առավել մասնակցային, արդյունքում դպրոցի կրթական գործընթացի մասնակիցները կարող</p>	<p>ՀՀ-ի հանրակրթության ոլորտի օրենսդրությունը բավական կայացած է, սակայն դա ուղղված է լուծելու տարբեր իրավիճակային խնդիրներ: Այդ իսկ պատճառով տարբեր ժամանակահատվածներում ընդունված օրենքները և ենթաօրենսդրական ակտերը փոխհամաձայնեցման կարիք ունեն:</p> <p>Վերջին երկու տարիների ընթացքում կրթության ոլորտը կարգավորող մի շարք օրենսդրական փոփոխությունները կարող են ուղղակիորեն ազդել դպրոցի կառավարման վրա՝ պայմանավորված կրթական</p>

<p>են անմիջական մասնակցություն ունենալ e-draft հարթակում տեղադրվող օրենքների քննարկմանը:</p> <p>Դպրոցի տնօրենի անհատական որակները և մասնակցային ղեկավարման հմտությունները հնարավորություն են տալիս ձևավորել կառավարման մասնակցային մշակույթ, որը կապահովի արդյունավետ կառավարումը և դպրոցի կայուն զարգացումը:</p> <p>Կառավարման և խորհրդակցական մարմինների համար անցկացվող նպատակային վերապատրաստումները կարող են խթանել այդ մարմինների արդյունավետ գործունեությունը, նախաձեռնողականությունը և մոտիվացիան:</p>	<p>գործընթացի մասնակիցների ոչ պատշաճ իրազեկվածությամբ:</p>
--	--

2.4 Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Դպրոցը մշտապես ակտիվ համագործակցում է ԿԳՄՄՆ, ԿՏԱԿ-ի, ԳԹԿ-ի, ՏՄԱԿ-ի, ԿԶՆԱԿ հիմնադրամի, ԱՅԲ հիմնադրամի, UNICEF-ի, COAF-ի, ԱՄՆ դեսպանատան, ԱԻՆ-ի հետ, մասնակցություն է ունենում նրանց կողմից իրականացվող ծրագրերին, մրցույթներին, աշխատարաններին և կոնֆերանսներին: Դպրոցն ակտիվ համագործակցում է հանրապետության այլ ուսումնական հաստատությունների, հիմնադրամների, հասարակական</p>	<p>Վերջին տարիներին՝ պայմանավորված համաճարակով և պատերազմական վիճակով թուլացել է համագործակցությունը տարբեր ՀԿ-ների հետ:</p> <p>Նվազել են մշակույթի գործիչների, մտավորականների, սպորտսմենների այցելությունները դպրոց:</p> <p>Դպրոցում չի իրականացվում երկարօրյա ուսուցում:</p>

կազմակերպությունների, մշակութային օջախների հետ:

Դպրոցը հանդիսանում է T4 համաշխարհային կրթական ցանցի ակտիվ մասնակից և համագործակցում արտասահմանյան գործընկերների հետ փորձի փոխանակման և համատեղ ծրագրերի իրականացման նպատակով: Դպրոցի երկու մանկավարժ հանդիսանում են ծրագրի հայաստանյան դեսպան: 2021 թ-ին T4 համաշխարհային կրթական կազմակերպության կողմից ճանաչվել է աշխարհի 100 լավագույն դպրոցներից մեկը և իր լավագույն փորձը ներկայացրել համաշխարհային կրթական շաբաթվա ընթացքում:

Դպրոցը հանդիսանում է eTwinning միջազգային համաեվրոպական դպրոցական ծրագրի ակտիվ մասնակից, որի շրջանակներում մանկավարժներն իրականացնում են տեղական և միջազգային ուսումնական նախագծեր: Դպրոցը երեք անգամ անըդմեջ արժանացել է eTwinning դպրոց կոչմանը, երկու մանկավարժ հանդիսանում են ծրագրի դեսպան:

E-school ծրագրի շրջանակներում դպրոցը հանդիսանում է մենթոր դպրոց և ՀՀ մարզային դպրոցներում ուսուցիչների բացակայությամբ պայմանավորված, սովորողների կրթության շարունակականության ապահովման նպատակով իրականացնում է հեռավար ուսուցում :

Դպրոցն «Անգլախոս գյուղական համայնքներ» ծրագրի շրջանակներում ակտիվորեն համագործակցում է Հայաստանի մանուկների հիմնադրամի, ԱՄՆ դեսպանատան և Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ և 2022թ-ից դպրոցի անգլերենի

ուսուցիչները անցնում են վերապատրաստում:

Ամուր հիմքերի վրա է դպրոցի համագործակցությունը «Գյումրու գիտության և մշակույթի ռուսական տան» հետ, սովորողները մշտապես ներգրավվում են կազմակերպվող մրցույթներին և միջոցառումներին:

Դպրոցը մշտապես համագործակցում է ՀՀ Լոռու մարզպետարանի երեխաների և կանանց իրավունքների բաժնի և ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների հետ և աշխատանքներ իրականացնում ընտանիքում բռնության կանխարգելման և հակասոցիալական վարք դրսևորող աշակերտների դաստիարակչական աշխատանքների ուղղությամբ:

Դպրոցն արդյունավետորեն համագործակցում է «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի Վանաձորի մանաճյուղի հետ, որի շնորհիվ դպրոցի ԿԱՊԿ և սոցիալապես անապահով աշակերտները աշակերտները հնարավորություն ունեն մասնակցելու տարբեր խմբակների և զարգացնել իրնց ստեղծագործական ունակությունները:

ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրով դպրոցում իրականացվում է տարրական դասարանների «Կայուն դպրոցական նսնունդ» ծրագիրը, որտեղ որպես աշխատակիցներ ներգրավված են դպրոցի ծնողները: Ծրագրի շրջանակներում ծնողական համայնքը իր ֆինանսական ներդրումն է ցուցաբերում սովորողներին լրացուցիչ

աննդի տրամադրման համար:	
Հնարավորություններ	Վտանգներ
<p>Դպրոցի սոցիալական մանկավարժի, հոգեբանի և դասղեկների միջոցով հնարավոր է ապահովել համագործակցություն տարբեր ՀԿ-ների հետ, կազմակերպել մշակույթի գործիչների, մտավորականների, սպորտամենների այցելությունները դպրոց:</p> <p>Իրավական ակտերի փոփոխության շնորհիվ երկարօրյա ուսուցումը դառնում է պարտադիր</p> <p>Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13 հոկտեմբերի 2020 թ. N 38-Ն հրամանի երկարօրյա խմբերի գործունեությունը հնարավորություն կընձեռի սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները, ստեղծագործական ունակությունները զարգացնելու նպատակով:</p>	<p>Հնարավոր արտակարգ իրավիճակները և համաճարակը:</p> <p>Սոցիալական մանկավարժի հաստիքի կրճատումը:</p> <p>Սոցիալական անբարենպաստ պայմաններ:</p>

2.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակներ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցի մանկավարժները մշտապես մասնակցում են մասնագիտական որակների զարգացման միջոցառումների՝	Մանկավարժական համայնքի մասնագիտական և որակական զարգացումն անհամաչափ է:

<p>ինքնակրթվելով և ինքնագարգանալով:</p> <p>Բոլոր մանկավարժներն ունեն բարձրագույն կրթություն, նրանցից 3-ը անցել են կամավոր ատեստավորում, 6 ունեն ուսուցիչների որակավորման առաջին աստիճանի տարակարգ: Երկու մանկավարժ հանդիսանում են eTwinning միջազգային համաեվրոպական դպրոցական ծրագրի և T4 համաշխարհային կրթական ցանցի հայաստանյան դեսպան: Դպրոցի թվով 4 ուսուցիչ հանդիսանում են հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստող, իսկ մեկ ուսուցիչ նաև կամավոր ատեստավորումից 0-59 տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչների հավերապատրաստումների դասընթացավար է: Ուսուցիչներից մեկը գիտությունների թեկնածու է: Դպրոցի անգլերենի երկու ուսուցիչ 2023թ-ին ավարտել են Հայաստանի Ամերիկյան Համալսարանը և ստացել անգլերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման վկայագիր, իսկ երրորդ ուսուցիչը մասնակցել է ԱՄՆ դեսպանատան կողմից կազմակերպած դասընթացին: 2021թ-ին դպրոցի տնօրենը, փոխտնօրենը և մեկ ուսուցիչ մասնակցել են «Տարվա լավագույնները» մրցույթին և ճանաչվել հաղթող՝ հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր անվանագարգում:</p>	<p>Մրցույթներին և ծրագրերին ակտիվություն են ցուցաբերում և հաջողություն գրանցում մի խումբ ուսուցիչներ, մինչդեռ մյուսները ուսուցիչները նախաձեռնող չեն և հազվադեպ են հանդես գալիս առաջնորդի դերում:</p>
<p align="center">Հնարավորություններ</p>	<p align="center">Վտանգներ</p>

<p>Ակտիվ ուսուցիչների մասնագիտական որակները, նախաձեռնողականությունը հնարավորություն է տալիս օգտագործելու նրանց կարողունակությունները մանկավարժական համայնքի համաչափ զարգացումը խթանելու համար՝ միջանձնային փոխհարաբերությունների և փոխգործակցության գործընթացի միջոցով:</p>	<p>Անվստահություն սեփական ուժերի հանդեպ: Կամավոր ատեստավորումը չհաղթահարած ուսուցիչների հաջորդ տարվա պարտադիր մասնակցության պահանջը:</p>
---	--

2.6 Օգտագործվող SՀS և կրթական այլ տեխնոլոգիաներ և նորարարություններ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Դպրոցում ամուր հիմքերի վրա է դրված SՀS կիրառումը կրթական ծրագրերի իրականացման, կառավարման, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և վարչատնտեսական գործունեության նպատակներով: Դպրոցի վարչական և մանկավարժական անձնակազմը հմտորեն կիրառում է տեխնոլոգիաները իր ամենօրյա աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:</p> <p>Պատշաճ և սահմանված ժամկետներում իրականացվում են աշխատանքները դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում: Առարկայական դասավանդող ուսուցիչները պատշաճ վարում են էլեկտրոնային դասամատյանները, ինչը վերահսկվում է</p>	<p>Դպրոցի մանկավարժական անձնակազմի մոտ 30%-ը դեռևս դժվարանում է կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաները կրթական նպատակներով:</p> <p>Համակարգիչները թեև բավարար են ինֆորմատիկայի դասերի և տեսադասերի կազմակերպման համար, սակայն ժամանակակից դասավանդման գործընթացում՝ SՀS օգտագործմամբ դասերի իրականացումը պահանջ է, որն իրագործելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր դասարանում ապահովել մեկական համակարգիչ և պրոյեկտոր, դպրոցի ողջ տարածքը ապահովել հզոր ինտերնետ կապով՝ հաշվի առնելով սովորողների համացանցից օգտվելու ապահովությունն ու անվտանգությունը:</p>

դպրոցի տնօրենը և տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի կողմից՝ իրենց վերապահված գործառնությունների շրջանակում:

Դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացում մշտապես կիրառվում են տեղեկատվական տեխնոլոգիաներ. տեսադասերի կազմակերպում, ֆիլմերի դիտում, վիրտուալ լաբորատորիաների կիրառում, վիկտորինաների, ինտելեկտուալ զարգացնող խաղերի կազմակերպում: ՏՀՏ տեխնոլոգիաները դասապրոցեսի ընթացքում կիրառվում են նաև միավորային և ձևավորող գնահատում իրականացնելու նպատակով: Դպրոցի մանկավարժական անձնակազմի մոտ 70%-ը հմտորեն կիրառում է հետևյալ տեղեկատվական տեխնոլոգիաները. learningapps, Kahoot, Quizizz, Wordwall, SMART Notebook: Դպրոցի մանկավարժների մեծամասնությունը հմտորեն կարողանում են օգտագործել MS Teams, Google Classroom հեռավար հարթակներից:

ՏՀՏ-ի գործածությամբ ուսուցիչներն հարուստ, բազմերանգ ու դինամիկ ուսումնական նյութեր են ստեղծում և օգտագործում, արդյունքում ուսումնական գործընթացը դարձնում ավելի ինտերակտիվ: Յուրաքանչյուր ամսվա համար կազմվում է համակարգչային դասասենյակներում իրականացվող դասերի գրաֆիկ, ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալի կողմից վերահսկվում է ուսումնական պրոցեսում ՏՀՏ նպատակային օգտագործումը:

Դպրոցի ողջ փաստաթղթաշրջանառությունը, հաշվապահական հաշվառման վարումը /ՀՕ/ և ֆինանսական հաշվետվությունները կազմումը, գրադարանի դասագրքերի ֆոնդի հաշվառումը և վարումը իրականացվում է էլեկտրոնային եղանակով:

Կրթության ոլորտը դիտարկվում է որպես երկրի կայուն զարգացման, նաև մարդկային ռեսուրսի պահպանման ու վերարտադրման նախապայմաններից: Կրթության ոլորտը ամենաբարդերից է, որն անընդհատ կատարելագործվելու կարիք ունի: Այժմ շատ կարևորվում և խրախուսվում է հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառությունը ուսումնական գործընթացում: Ուսումնական պլաններում ամիսը մեկ անգամ նախատեսված են տեխնոլոգիաների ներգրավմամբ դասեր բոլոր առարկաներից, հիմնականում դպրոցներն ունեն համակարգչային սենյակ, համացանց, ուսուցիչները ժամանակ առ ժամանակ անցնում են համակարգչային հմտությունների վերապատրաստում:

Բայց առաջին հերթին ուսուցիչը պետք է հասկանա S2S կիրառության առավելությունները և զգա, թե որքանով է այն հեշտացնում թե՛ իր աշխատանքը, թե՛ աշակերտների՝ դարձնելով դասն առավել մատչելի, հետաքրքիր, կիրառական և աշակերտակենտրոն:

Դպրոցը մեծապես ուշադրության կենտրոնում է պահում համացանցի և տեղեկատվական տեխնոլոգիաների ապահով և անվտանգ օգտագործումը, մշտապես կորևորելով սովորողների և աշխատակիցների մեդիագրագիտությունը, պարբերաբար

<p>իրականացվում են մեղիագրագիտության վերաբերյալ սեմինարներ և քննարկումներ, յուրաքանչյուր տարի նշվում է ապահով համացանցի միջազգային օրը: Դպրոցը համաեվրոպական eSafety Label նախաձեռնության անդամ է դպրոցական համացանցային ապահով միջավայրի համար արժանացել է էլեկտրոնային անվտանգության բրոնզե մեդալի:</p>	
<p>Հնարավորություններ</p>	<p>Վտանգներ</p>
<p>Թույլ կողմերում ներկայացված բոլոր խնդիրներն իրագործելի են դպրոցի բյուջեն ճիշտ պլանավորելու դեպքում:</p> <p>Արտաբյուջետային միջոցների գոյացում:</p> <p>Ձեռնարկատիրական գործունեության ծավալում:</p>	<p>Ցածր աշխատավարձը լրջագույն խնդիր է, որ ետ է պահում ուսուցիչներին նորարարությունից:</p> <p>Ուսուցիչների որոշ մասը ՏՀՏ-ի կիրառումը համարում է հավելյալ աշխատանք, ծանրաբեռնվածություն, որի համար նրանք նաև չեն վճարվում:</p> <p>Բյուջետային հատկացումների, հիմնադրի և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների ոչ արդյունավետ տնօրինում:</p>

2.7 Հաստատության տրամադրած կրթության որակը

Կրթության որակի ապահովման համար անհաժեշտ է մանկավարժների մասնագիտական որակական չափանիշների բարձրացման ապահովում և կրթության արդյունքի անաչառ գնահատման մեխանիզմների ներդրում:

Կրթության որակը ոչ միայն գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման և արժեհամակարգի համապատասխանությունն է հանրակրթական պետական չափորոշիչով սահմանված վերջնարդյունքներին, այլև ուսումնական հաստատության արդյունավետ գործունեությունը և յուրաքանչյուր մանկավարժի և վարչական աշխատողի ներդրումը կրթության ապահովման գործում:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Դպրոցում իրականացվում է չափորոշահեն կրթություն:</p> <p>2021-թ-ից դպրոցի բոլոր ուսուցիչները առարկայական թեմատիկ պլանավորումներում սահմանել են թեմաների ուսուցման նպատակներն ու վերջնարդյունքները, ինչը մեկ քայլ առաջ է դեպի նոր չափորոշիչային պահանջների ներդրումը:</p> <p>Դպրոցը որդեգրել է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովումը, ինչի մասին է վկայում դպրոցում մեծ թվով ԿԱՊԿ սովորողների ուսումնառությունը:</p> <p>Դպրոցի մանկավարժները հստակ պատկերացում ունեն ոչ ֆորմալ կրթության կազմակերպման մասին /2021 թ-ին T4 համաշխարհային կրթական կազմակերպության կողմից դպրոցը ճանաչվել է աշխարհի 100 լավագույն դպրոցներից մեկը և իր լավագույն փորձը ներկայացրել համաշխարհային կրթական շաբաթվա ընթացքում/:</p> <p>Դպրոցում, սկսած տարրական դասարաններից, բարձր հիմքերի վրա է դրված նախագծային աշխատանքների իրականացումը, ինչի մասին փաստում է կրթական տարբեր նախագծերում սովորողների ընդգրկվածության բարձր ցուցանիշը և արձանագրած հաջողությունները:</p>	<p>Չնայած ձեռնարկված միջոցառումներին կրթության որակի խնդիրը մնում է գերակա հիմնախնդիրներից մեկը:</p> <p>Ուսուցիչները բավարար տեղեկացված չեն ուսումնառության համընդհանուր ձևավորման /ՈւՀՁ/ սկզբունքներին համապատասխան ուսուցման կազմակերպմանը: Նրանք դեռևս դժվարանում են տարբերակել ուսուցման բովանդակությունը, գործընթացն ու արդյունքները յուրաքանչյուր սովորողի հաջողությունն ապահովելու նպատակով:</p> <p>Օժտված երեխաների բացահայտումը և անհատական աշխատանքների կազմակերպումը:</p> <p>Դպրոցականների առարկայական օլիմպիադաների մասնակցության մոտիվացիայի պակաս:</p> <p>Տարածքային և մարզային օլիմպիադաներում միջին ցուցանիշների արձանագրում: Հանրապետական օլիմպիադաներում ցածր մասնակցություն:</p>


<p>Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը բաշխվում է ոչ թե ըստ ուսուցիչների կարիքների, այլ հաշվի առնելով ինչպես տվյալ առարկայի ծրագրային բարդությունը, նյութի ծավալը և հատկացված ժամաքանակը, այնպես էլ սովորողների նախասիրությունները, հակումները և համայնքի կարիքները:</p> <p>Դպրոցի տնօրենությունը չափորոշչային պահանջների կատարումը ստուգելու նպատակով, իր կողմից սահմանված պարբերականությամբ, դպրոցում կազմակերպում է ներքին գնահատում: Ուսման որակի գնահատման ձևերն ու մեթոդները /գրավոր, բանավոր, ընթերցանության տեխնիկայի ստուգում/, դասարանները, ուսումնական առարկաները ընտրվում են սահմանված նպատակի համաձայն:</p>	
<p>Հնարավորություններ</p>	<p>Վտանգներ</p>
<p>Դպրոցում կան բավականաչափ հմուտ և փորձառու ուսուցիչներ, որոնց նախաձեռնողականությամբ դպրոցում հնարավոր կլինի ստեղծել մեթոդական խորհուրդ, որը հիմնված կլինի յուրաքանչյուր մանկավարժի ընդգծված կարողունակությունների վրա և կձևավորի փոխօգնության և համագործակցության մթնոլորտ:</p> <p>Անձնակազմի խրախուսման և արժևորման համակարգի ներդրում:</p> <p>Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչը հնարավորություն ունի ազատ ընտրելու վերապատրաստում իրականացնող կազմակերպությունը, ինչը հնարավորություն է տալիս ընտրել ոլորտի</p>	<p>Հնարավոր արտակարգ իրավիճակները և համաճարակը:</p> <p>Ներդրվող առարկայական չափորոշիչների և ծրագրերի հիման վրա կազմված դասագրքերի և ուսումնական ձեռնարկների կիրառումը հավելյալ ծանրաբեռնվածություն է առաջացնելու ուսուցիչների համար:</p> <p>Ուսուցիչների ծանրաբեռնված աշխատանքային գրաֆիկ/երբեմն ընտանիքի հոգսերը հոգալու համար ուսուցիչները ստիպված են լինում հիմնական աշխատաժամից դուրս աշխատել նաև տարբեր</p>

լավագույն մասնագետներին:	կրթական կենտրոններում/:
--------------------------	-------------------------


Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ վերջին տարիներին դպրոցում գնալով ավելանում է միջակայությունը: Ուսման որակի անկումը 2019-2020 և 2020-2021 ուսումնական տարիներին պայմանավորված է 2020թ-ից ի վեր երկրում տիրող համաճարակով և երկրի պատերազմական իրավիճակով: 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում իրականացված հետևողական աշխատանքների շնորհիվ հնարավոր եղավ հասնել կրթության որակի բարելավմանը, սակայն նախորդ երկու ուսումնական տարիների բացթողումները կրում էին խորքային բնույթ և արտացոլվեցին 2022-2023 ուսումնական տարվա կրթության որակի վրա:

Սովորողների թիվը և առաջադիմությունը


Ուստարի	Սովորողների թիվ	ԿԱՊԿՈւ սովորողների թիվ	Գերազանց	Լավ	Բավարար	Որակ
2018-2019	415	40	87	95	170	51.7
2019-2020	439	41	81	104	199	48.6
2020-2021	455	29	83	105	203	48.1
2021-2022	473	31	90	122	211	50.1
2022-2023	488	33	68	142	242	46.5



Աշակերտների և ԿԱՊԿ սովորողների թիվ



Կրթության որակի ցուցանիշներ



Կրթության որակի ցուցանիշներ

Մարզային, հանրապետական, օլիմպիադաներում ու մարզական, մշակութային մրցույթներին սովորողների մասնակցության վերաբերյալ

Ցուցանիշ	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը	12	19
Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը	1	-
Հանրապետական առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը	1	-
Հանրապետական առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը	1	-
Մարզային և հանրապետական մարզական ու մշակույթի ոլորտում մրցույթների մասնակիցների թիվը	89	150

2.8 Բազմակարծիք ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Դպրոցում ստեղծված է բազմազանությունն արժևորող և յուրաքանչյուր աշակերտի ուժեղ կողմերի վրա հիմնվող մշակույթ / ներառական կրթությունը դպրոցում իրականացվում դեռևս 2015թ-ից/:</p> <p>Բարձր մակարդակի վրա է դրված երեխաների և նրանց ընտանիքների հետ համատեղ աշխատանքը, ընտանիքների ներգրավվածությանն ուղղված միջոցառումները, որը նպաստում է երեխայի ճիշտ ուսումնական նպատակների սահմանմանը և նպատակների իրագործման ռազմավարությանը:</p> <p>Դպրոցում հոգեբանամանկավարժական աջակցող թիմի և տարբեր կառույցների կողմից պարբերաբար կազմակերպվում են սեմինար-քննարկումներ բռնության և բուլինգի կանխարգելման նպատակով, որոնց մասնակիցներն են սովորողները, ուսուցիչները և ծնողները:</p> <p>Դպրոցում բարձր հիմքերի վրա է ընտանեկան արժեքների գնահատման և պահպանման ուղղությամբ աշխատանքների իրականացումը, կազմակերպվում են արտադասարանական միջոցառումներ, գրքի ընթերցումներ և քննարկումներ: Հատուկ տեղ է հատկացվում ընտանիքի օրվան:</p> <p>Դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցող թիմի և ուսուցիչների ամենօրյա աշխատանքը ուղղված է սովորողների</p>	<p>Արտադասարանական միջոցառումներին սովորողների երբեմն պարտավորված մասնակցությունը:</p> <p>Երկարօրյա ուսուցման կազմակերպման բացակայություն, այդ թվում՝ ԿԱՊԿ ունեցող սովորողի որակյալ կրթության ապահովմանն ուղղված գործընթացներ, որոնք միտված կլինեին միջավայրային խոչընդոտների վերացման և հավասար հնարավորությունների ստեղծմանը:</p> <p>Ուսումնառության համընդհանուր ձևավորման (ՈԻՀՁ) համատեքստում, նպատակ ունենալով կրթական համակարգը հարմարեցնելու բոլոր սովորողների կարիքներին ու առանձնահատկություններին ուսուցիչները դեռևս լավ չեն պատկերացնում, թե ինչպես սովորողներին ներգրավել դասապրոցեսին և ցուցաբերել բազմազան միջոցներ կիրառելու վարպետություն :</p>

համագործակցության, ընկերասիրության, հանդուրժողականության, արդյունավետ հաղորդակցման, պատասխանատվության, կոնֆլիկտների հաղթահարման, հույզերի կառավարման հմտությունների զարգացմանը:

Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը կազմելիս առանձնահատուկ նշանակություն է տրվում սովորողների մոտ վնասակար սովորությունների կանխարգելմանն ուղղված և առողջ ապրելակերպ ձևավորելու աշխատանքների իրականացմանը:

Անցանկալի, հակաիրավական և հակասոցիալական վարք ցուցաբերող սովորողների սոցիալ - հոգեբանական վերականգնմանն ուղղված միջամտության ուղղությամբ դպրոցը համագործակցում է տարբեր կառույցների հետ, ամրապնդում դպրոց-ընտանիք-համայնք կապը:

Դպրոցում մշտապես իրականացվում են սովորողների սոցիալական հարմարմանն ուղղված աշխատանքներ:

Սովորողների վարքի, կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների պահպանման ուղղությամբ աշխատանքների կազմակերպում հարցում մեծ ներգրավվածություն ունի դպրոցի աշակերտական խորհուրդը:

Դպրոցի բոլոր մանկավարժների ջանքերով իրականացվում է

Դպրոցում առանձնահատուկ կարևորվում է ներքին կարգապահական կանոնների, սովորողների իրավունքների և պարտականությունների

<p>վերաբերյալ իրազեկվածության և պահպանման ապահովումը /սեմինար-քննարկումներ, բանավեճեր, իրազեկման աշխատանքներ/:</p> <p>Համընդհանուր մոտեցում է ցուցաբերվում սովորողներին ազգային գաղափարներով տոգորելու, փողոցային բարքերի դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով՝ պատմավեպերի ընթերցանության, գրական երեկոների ու կոլեկտիվ քննարկումների կազմակերպում:</p>	
<p style="text-align: center;">Հնարավորություններ</p>	<p style="text-align: center;">Վտանգներ</p>
<p>Խորհրդի անդամների, դպրոցի անձնակազմի և համայնքի հետ համատեղ քննարկումների միջոցով դպրոցը դարձնել ավելի ներառական:</p> <p>Հաշմանդամություն ունեցող և ԿԱՊԿ երեխաների խնամակալների կամ ծնողների կարողությունների զարգացում:</p>	<p>Դժվար դաստիարակվող աշակերտների՝ նոր կոլեկտիվ մուտք ցործելու հետ կապված ռիսկեր:</p> <p>Ծնողի անհարկի կոպիտ միջամտություններից բխող ռիսկեր:</p>

2.9 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորություններ


Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Դպրոցի տնօրենության կողմից մշտապես խրախուսվում է մանկավարժների ինքնակրթությունը, ինքնագարգացումը և մասնակցությունը տարբեր կրթական ծրագրերին:</p> <p>Դպրոցի տնօրենը անմիջականորեն մասնակցություն է ցուցաբերում իրականացվող աշխատանքներին, աջակցում մանկավարժներին մեթոդապես, մանկավարժների կարողունակությունների զարգացման նպատակով պարբերաբար կազմակերպում սեմինարներ, փորձի փոխանակման աշխատարաններ:</p> <p>Դպրոցում ձևավորված է վերապատրաստումների և սեմինարների ընթացքում ձեռք բերված փորձը և գիտելիքները մյուսների հետ կիսելու մշակույթ:</p> <p>Ուսումնական տարվա ընթացքում տարբեր ծրագրերում ակտիվություն ցուցաբերած մանկավարժները տարեվերջյան ամփոփման ժամանակ արժանանում են շնորհակալագրերի կամ ներկայացվում են համայնքային և մարզային իշխանությունների, ինչպես նաև դպրոցների արհեստակցական միության խրախուսմանը:</p> <p>2020-2021 և 2021-2022 ուսումնական տարիներին իրականացվել է աշխատակիցների դրամական խրախուսում, որն անմիջականորեն դրական ազդեցություն է ունեցել կրթության որակի վրա:</p> <p>Արդյուքնում, մանկավարժական համայնքը մոտիվացված է, ձգտում է մասնագիտական շարունակական զարգացման՝ ինքնակրթությունը</p>	<p>Չնայած նրան, որ վերջին բարեփոխումները թույլ են տալիս ուսուցիչներին ազատ ընտրել վերապատրաստող կազմակերպություն, ուսուցիչների մեջ դեռևս արմատավորված է կազմակերպության ընտրությունը պայմանավորել իրենց իմացած մասնագետներով:</p> <p>Վերջին 2 տարիների ընթացքում հերթական ատեստավորման ենթական ուսուցիչների անցած վերապատրաստումների արդյունավետության վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ վերապատրաստումները էական ազդեցություն չեն ունենում կրթության որակի վրա:</p> <p>Միշտ չէ, որ հնարավոր է լինում աշխատակիցներին դրամական խրախուսում տալ՝ ելնելով մի շարք արտաքին գործոններից:</p> <p>Խրախուսման համակարգային մեխանիզմի բացակայությունը թույլ չի տալիս աշխատակիցների արժևորման հարցում ապահովել անաչառության սկզբունքը:</p>

<p>համարելով 21-րդ դարի ուսուցչի պահանջ:</p>	
<p>Հնարավորություններ</p>	<p>Վտանգներ</p>
<p>Դպրոցի ֆինանսական միջոցների արդյունավետ պլանավորումը և տնօրինումը հնարավորություն է տալիս աշխատակիցներին պարբերաբար ներկայացնել դրամական խրախուսման:</p> <p>Դպրոցի՝ տարբեր կազմակերպությունների հետ սերտ համագործակցությունը հնարավորություն է տալիս բացահայտել մանկավարժների համար ինքնակրթության և մասնագիտական շարունակական զարգացման հնարավոր միջոցառումներ և աջակցել մանկավարժներին դրանց մասնակցելու:</p>	<p>Տարբեր առարկաների ուղղությամբ իրականացվող վերապատրաստումները, սեմինարները և ծրագրերը համաչափ չեն, դրանք գերակշռում են օտար լեզուների, բնագիտական առարկաների և տեղեկատվական տեխնոլոգիաների մասով, ինչը հավասար հնարավորություն չի տալիս բոլոր ուսուցիչների ինքնակրթության համար:</p>

2.10 Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծություն

Դպրոցի ֆինանսավորման հիմնական աղբյուրը Կառավարության կողմից հատկացված միջոցներն են, որը մինչև 2023թ-ի սեպտեմբերն իրականացվում է ըստ աշակերտ: 2023թ-ի սեպտեմբերից սեպտեմբերից դպրոցների ֆինանսավորման կարգում կկատարվեն փոփոխություններ:

Տարիներ	Ընդհանուր ֆինանսավորում	Աշխատավարձի ֆոնդ	Կումուլատիվ ծախսեր	Շեքնշիմության պահպանման ծախսեր	Կրթական նպատակներով իրականացված ծախսեր և պարգևատրումներ	Կրթության որակ
